ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

թիվ 22-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 39-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի «Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2021 թվականի մայիսի 18-ի թիվ 19-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39-Լ հրամանում (այսուհետև՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետով՝»,

2) Հրամանի 5-րդ կետում «Ա.Ֆիդանյանին» բառերը փոխարինել «Կ.Հակոբյանին» բառերով:

Ոստիկանության գեներալ-մայոր **Ա. Հովհաննիսյան**

13. 07. 2023 թ.

ք. Երևան